Իններորդ հաղորդում

Քրիստոսի լիակատար սպասավորությունը երեք փուլերում

Գրվածքների ընթերցում. Հվի 1:14, Ա Կրթ 15:45բ, Հյտ 1:4, 3:1, 4:5, 5:6, 2:4-5, 19:7-9, 21:2, 22:17ա

I. Աստծու նորկտակարանյան տնտեսության մասին եզակի ուսմունքը (Ա Տմթ 1:3-4) Քրիստոսի լիակատար սպասավորության վերաբերյալ ուսմունքն է դրա երեք փուլերում՝ մարմնացման, ներառման և ուժեղացման.

Ա. «Թե Տիրոջ վերականգնումն ինչ և ինչպիսին կլինի, լիովին կախված է այն բանից, թե մենք ինչպես կվարվենք այդ ուսմունքի հետ» (Վիթնես Լի). այդ ուսմունքը կարելի է ամփոփել մեկ պարզ նախադասությամբ. «Տիրոջ վերականգնումը հետևյալն է. Աստված դարձավ մսեղի, մսեղին դարձավ կենդանարար Հոգի, իսկ կենդանարար Հոգին դարձավ յոթնապատիկ ուժեղացված Հոգին, որպեսզի կառուցի եկեղեցին, որը դառնում է Քրիստոսի Մարմինն ու ավարտունացնում է Նոր Երուսաղեմը» («Աստվածային և առեղծվածային ոլորտը», էջ 24):

Բ. Աստծու հետ որպես Նրա համագործակիցներն աշխատելու համար (Բ Կրթ 6:1, Ա Կրթ 3:9) մենք պետք է ճանաչենք, փորձառաբար ապրենք ու վայելենք Քրիստոսին (շահենք Քրիստոսին՝ Փլպ 3:8-14) Նրա լիակատար սպասավորության մեջ Նրա երեք աստվածային և առեղծվածային փուլերում:

II. Առաջին փուլում՝ Իր մարմնացման փուլում (Իր մարդկային ծննդից մինչև Իր մահը), Քրիստոսն իրագործեց հետևյալ հիմնական բաները.

Ա. Իր մարմնացման փուլում Քրիստոսն անսահման Աստծուն բերեց սահմանափակ մարդու մեջ. թեև Քրիստոսը Բեթղեհեմից էր ելել, Նրա ելքերը վաղեմի ժամանակներից՝ հավիտենության օրերից էին. սա մատնանշում է Քրիստոսի հավիտենական ծագումը և նշանակում է, որ Եռամեկ Աստված պատրաստվում էր դուրս գալու հավիտենությունից և ժամանակի մեջ մտնելու՝ Իր աստվածայնությամբ մարդկայնության մեջ մտնելու՝ Բեթղեհեմում որպես մարդ ծնվելով՝ Մք 5:2:

Բ. Իր մարմնացման փուլում Քրիստոսը միավորեց, միաձուլեց և ընդհանրականացրեց Եռամեկ Աստծուն եռամաս մարդու հետ՝ Ղկս 1:35, 2:40, 52, Հվի 14:10-11, 1:14:

Գ. Իր մարմնացման փուլում Քրիստոսն Իր մարդկայնության մեջ Իր անուշաբույր առաքինությունների միջոցով արտահայտեց լիառատ Աստծուն՝ Նրա հարուստ հատկանիշների մեջ.

1. Փրկիչ-Մարդու՝ գորովի, բարության, համբերատարության, ողորմության և հասկացողության մարդկային առաքինությունները դրսևորվեցին մեղսալի կնոջ հետ Նրա հաղորդակցության ժամանակ. Նրա աստվածային հատկանիշները, մասնավորապես՝ մարդու մեղքերը ներելու Նրա աստվածային իշխանությունը և ներված

մեղավորին խաղաղություն տալու Նրա ընդունակությունը, նույնպես դրսևորվեցին՝ Ղկս 7:36-50:

2. Փրկիչ-Մարդը՝ որպես բարի սամարացին, իջավ այն վայրը, որտեղ իր թշվառ ու կիսամեռ վիճակում պառկած էր հուդայական կողոպտիչների վիրավոր զոհը. Նա կարեկցեց Իր մարդկայնության մեջ Իր աստվածայնությամբ հանդերձ և նրա հանդեպ քնքուշ բուժում ու փրկող հոգատարություն ցուցաբերեց՝ լիովին բավարարելով նրա հրատապ կարիքը՝10:25-37:
3. Երբ Քրիստոսը խաչվում էր, Նրա հետ խաչվող երկու հանցագործներից մեկն ասաց. «Հիսո՛ւս, հիշի՛ր ինձ, երբ Քո թագավորությունը գաս»: Հիսուսը նրան ասաց. «Ճշմարիտ եմ քեզ ասում. այսօր Ինձ հետ դրախտում կլինես». սա ցույց է տալիս Նրա հավիտենական ու անաչառ սիրո աստվածային հատկանիշը՝ արտահայտված Նրա փայփայող մարդկային առաքինության միջոցով՝ 23:42-43:

Դ. Իր մարմնացման փուլում Քրիստոսն իրագործեց Իր համաբովանդակ իրավական փրկագնումը խաչի վրա Իր մահվան միջոցով.

1. Նրա իրավական փրկագնումը համապատասխանում է Աստծու արդարությանը և Աստծու փրկության միջոց է Աստծու արդար օրենքի՝ մեղավորներին ներկայացված պահանջները բավարարելու համար՝ Հռմ 1:17ա, 3:21-26, 9:30-31:
2. Այն նրա համար է, որ մեղավորները ներվեն Աստծու առջև (Ղկս 24:47), լվացվեն (Եբր 1:3), արդարացվեն (Հռմ 3:24-25), Աստծու հետ հաշտվեն (5:10ա) և դիրքով սրբացվեն առ Աստված (Ա Կրթ 1:2, Եբր 13:12). այն հավատացյալներին որակավորում ու բերում է այն դիրքին, որ նրանք վայելեն Աստծու օրգանական փրկությունն ու մտնեն Աստծու ավելի բարձր շնորհքի մեջ՝ Աստծու հավիտենական տնտեսությունն իրագործելու և Աստծու վերջնական նպատակին հասնելու համար (Հռմ 5:10, 17, 21):

III. Երկրորդ փուլում՝ Իր ներառման փուլում (Իր հարությունից մինչև եկեղեցու դեգրադացիան), Քրիստոսն իրագործեց հետևյալ հիմնական բաները.

Ա. Հարության մեջ Նա ծնվեց որպես Աստծու անդրանիկ Որդի. այն, որ «Դավթի սերմը» դարձավ «Աստծու Որդի», խոսում է Քրիստոսի՝ հարության միջոցով Աստծու անդրանիկ Որդի սահմանվելու գործընթացի մասին. սա Աստծու ավետարանն է, որի համար Պողոսն առանձնացվել էր՝ 1:1-4.

1. Մարմնացմամբ Քրիստոսը՝ Աստծու միածին Որդին, Իր աստվածության մեջ (Հվի 1:18) մսեղի հագավ՝ մարդկային բնություն, որն ընդհանուր ոչինչ չուներ աստվածության հետ. Նա Իր մարդկայնության մեջ Աստծու Որդին չէր:
2. Հարության միջոցով Նրա մարդկային բնությունը սրբացվեց, բարձրացվեց ու փոխակերպվեց. հարության մեջ Նրա մարդկայնությունն աստվածացվեց, որդիացվեց, ինչը նշանակում է, որ Նա սահմանվեց

Աստծու Որդի՝ դառնալով Աստծու անդրանիկ Որդին, ով ուներ և՛ աստվածայնություն, և՛ մարդկայնություն՝ Հռմ 8:29, Գրծ 13:33:

3. Քրիստոսի միջի աստվածությունը՝ սրբության Հոգին, սկսեց գործել Նրա մահվան ժամանակ և հարության մեջ Նա «ծաղկեց»՝ դառնալով Աստծու անդրանիկ Որդին ու կենդանարար Հոգին, ով Իր աստվածային կյանքը ներդնում է մեր մեջ՝ մեզ Իր բազում եղբայրները դարձնելով՝ Հռմ 1:4, 8:29, Ա Կրթ 15:45բ:
4. «Փորձանմուշն» Աստծու անդրանիկ Որդին է, իսկ «վերարտադրությունը»՝ Աստծու բազում որդիները՝ «փորձանմուշի» անդամները, որոնք կազմում են Նրա Մարմինը, որն ավարտունանում է Նոր Երուսաղեմում՝ Կոս 1:18, Ա Պտ 1:3:
5. Քրիստոսն արդեն սահմանվել է Աստծու Որդի, իսկ մենք դեռ սահմանման գործընթացում ենք, այսինքն՝ որդիացման, աստվածացման գործընթացում՝ Հռմ 8:28-29.
   ա. Հարության մեջ Քրիստոսն Իր մարդկայնության մեջ սահմանվեց Աստծու Որդի, և այսպիսի հարության միջոցով մենք նույնպես Աստծու որդիներ սահմանվելու գործընթացում ենք՝ խ. 11:
   բ. Սահմանման գործընթացի բանալին հարությունն է, որը ներբնակվող Քրիստոսն է՝ որպես բարձրացող Հոգին, սահմանող Հոգին, կյանքի զորությունը մեր հոգում. մեզ հույժ անհրաժեշտ է սովորել քայլել հոգու համաձայն, վայելել ու փորձառաբար ապրել սահմանող Հոգուն՝ Հվի 11:25, Հռմ 8:10-11, Գրծ 2:24, Ա Կրթ 15:26, 5:4, Հռմ 8:4, 6, 14:

Բ. Մարմնացած Քրիստոսը՝ վերջին Ադամը, կենդանարար Հոգի դարձավ՝ Ա Կրթ 15:45բ, Հվի 6:63, Բ Կրթ 3:6.

1. Մենք «ներառում» բառն օգտագործում ենք՝ հիմնվելով «համաբովանդակ», այսինքն՝ «ամեն բան ներառող» բառի մեր օգտագործման վրա. այն, որ Քրիստոսը՝ որպես վերջին Ադամը, կենդանարար Հոգի դարձավ, նշանակում է, որ Նա համաբովանդակ Հոգի դարձավ՝ Փլպ 1:19:
2. Կենդանարար Հոգին, ով պնևմատիկ Քրիստոսն է, նաև կոչվում է կյանքի Հոգի (Հռմ 8:2), Հիսուսի Հոգի (Գրծ 16:7), Հիսուս Քրիստոսի Հոգի (Փլպ 1:19) և Տեր Հոգի (Բ Կրթ 3:18):
3. Ներառման փուլում Քրիստոսի՝ որպես կենդանարար Հոգու սպասավորությունը բացահայտված է Հռոմեացիներին ուղղված թղթի 8-րդ գլխում, որը ցույց է տալիս, որ Եռամեկ Աստծու կյանքը՝ որպես կյանքի Հոգու օրենքը, որը բաշխվում է մեր եռամաս էության մեջ, մեզ դարձնում կյանքի մարդիկ՝ որպես Աստծու որդիներն ու Քրիստոսի անդամները, որոնք կազմում են Քրիստոսի Մարմինը Նրա արտահայտության համար՝ այդպիսով կատարելով Աստծու սկզբնական մտադրությունը՝ Ծնդ 2:7, 9, Հռմ 8:14, 12:5.

ա. «Կյանքի [հուն. «զոե»] Հոգու օրենքը Քրիստոս Հիսուսի մեջ ինձ ազատել է մեղքի ու մահվան օրենքից»՝ 8:2:
բ. «Եթե Քրիստոսը ձեր մեջ է, ապա, թեև մարմինը մեռած է մեղքի պատճառով, հոգին կյանք [հուն. «զոե»] է արդարության պատճառով»՝ խ. 10:
գ. «Հոգուն սևեռած միտքը՝ կյանք [հուն. «զոե»] [է] և խաղաղություն»՝ խ. 6:
դ. «Եթե Հիսուսին մեռելներից Հարուցանողի Հոգին բնակվում է ձեր մեջ, ապա Նա, ով Քրիստոսին մեռելներից հարուցանեց, նաև ձեր մահկանացու մարմինները կկենդանարարի [հուն. «զոե»] Իր Հոգու միջոցով, ով բնակվում է ձեր մեջ»՝ խ. 11:

Գ. Իր հարության մեջ Քրիստոսը վերածնեց հավատացյալներին Իր Մարմնի համար՝ Ա Պտ 1:3.
1. Պնևմատիկ Քրիստոսը դարձավ Աստծու անդրանիկ Որդի և կենդանարար Հոգի հավատացյալներին վերածնելու համար, ինչի արդյունքում նրանք դառնում են Աստծու բազում զավակները, որոնք Նրա հետ ծնվեցին Աստծուց տիեզերական մեծ ծննդաբերության ժամանակ Հիսուս Քրիստոսի՝ մեռելներից հարուցանվելու միջոցով:
2. Քրիստոսի բոլոր հավատացյալները մեկ Հոգու մեջ ներմկրտվել են Քրիստոսի մեկ Մարմնի մեջ, և նրանց խմել է տրվել այս մեկ Հոգուց՝ Քրիստոսի Մարմինը կազմելու համար՝ Ա Կրթ 12:13:
3. Իր հարության մեջ Քրիստոսն Իրեն՝ որպես կենդանարար Հոգու տալիս է առանց չափի Աստծու խոսքն Իր խոսելու միջոցով՝ Հվի 3:34:

IV. Երրորդ փուլում՝ Իր ուժեղացման փուլում (եկեղեցու դեգրադացիայից մինչև Նոր Երուսաղեմի ավարտունությունը), Քրիստոսն ուժեղացնում է Իր օրգանական փրկությունը, առաջացնում է հաղթողներին և ավարտունացնում է Նոր Երուսաղեմը.

Ա. Եկեղեցու դեգրադացիայի պատճառով Քրիստոսը՝ որպես կենդանարար Հոգին, յոթնապատիկ ուժեղացվել է՝ դառնալով յոթ Հոգիները՝ յոթնապատիկ ուժեղացված կենդանարար Հոգին՝ Հյտ 1:4, 3:1, 4:5, 5:6:

Բ. Քրիստոսը՝ որպես յոթնապատիկ ուժեղացված կենդանարար Հոգին, ուժեղացնում է Իր օրգանական փրկությունը, որպեսզի հավատացյալներին փրկի.
1. Ձևական եկեղեցական կյանքից և Տիրոջ հանդեպ առաջին սերը, ճրագակալի շողացող ընդունակությունը և Քրիստոսի՝ որպես կյանքի վայելքը կորցնելուց Եփեսոսում եղող եկեղեցում՝ 2:1-7:
2. Պարտությունից, որը տանում է դեպի երկրորդ մահը ճաշակելը Զմյուռնիայում եղող եկեղեցում՝ խխ. 8-11:
3. Աշխարհի հետ «ամուսնական միության» մեջ եղող աշխարհիկությունից, ինչպես նաև Բաղաամի ու նիկողայոսականների ուսմունքից Պերգամոնում եղող եկեղեցում՝ խխ. 12-17:

4. Պոռնկությունից, կռապաշտությունից, դիվային ուսմունքներից և սատանայական խորություններից կաթոլիկության մեջ, որը խորհրդապատկերված է Թյուատիրայում եղող եկեղեցով՝ խխ. 18-29:
5. Հոգևոր մահից՝ մեռած ու մեռնող վիճակից, բողոքականության մեջ, որը խորհրդապատկերված է Սարդեսում եղող եկեղեցով՝ 3:1-6:
6. Պսակը կորցնելուց, որն արդեն ձեռք էր բերվել Եղբայրության մեջ՝ խորհրդապատկերված Ֆիլադելֆիայում եղող եկեղեցով՝ խխ. 7-13:
7. Գաղջությունից և անքրիստոսությունից դեգրադացված Եղբայրության մեջ՝ խորհրդապատկերված Լաոդիկեայում եղող եկեղեցով՝ խխ. 14-22:

Գ. Եթե ուզում ենք հաղթողներ լինել, պետք է վերականգնենք, պահպանենք ու զարգացնենք մեր առաջին սերը Տիրոջ հանդեպ.
1. Առաջին սերը թողնելը դարերի ընթացքում եկեղեցու ձախողման աղբյուրն ու հիմնական պատճառն է եղել՝ 2:4-5:
2. Տեր Հիսուսին առաջին սիրով սիրել նշանակում է Նրան տալ առաջին տեղը բոլոր բաներում. մենք պետք է բոլոր բաներում և բոլոր հարցերում Քրիստոսին տանք առաջին տեղը՝ առաջնությունը՝ Նրան համարելով ամեն ինչ մեր կյանքում՝ Կող 1:18բ:
3. Մենք չպետք է որևէ մեկին կամ որևէ բան սիրենք Տիրոջից առավել՝ ներառյալ մեր շունչ-կյանքը՝ Մտթ 10:37-39, Հյտ 12:11:

Դ. Մենք դեգրադացիայից փրկվում ենք յոթնապատիկ ուժեղացված պնևմատիկ Քրիստոսի խոսելու միջոցով և իրենց հոգում ապրող հաղթող սրբերի միջոցով՝ 2:1, 7, 1:10, 4:2, 17:3, 21:10:

Ե. Քրիստոսի յոթնապատիկ ուժեղացված երկնային սպասավորությունը նախատեսված է Քրիստոսի հարսին լիովին պատրաստելու (19:7-9), հարս-բանակը ձևավորելու (խխ. 11-21, 17:14), Սատանային կապելու (20:1-3), Քրիստոսի և Աստծու թագավորությունը բերելու (խխ. 4-6) և Նոր Երուսաղեմն ավարտունացնելու համար (2:7, 21:2):

Զ. Վերջնական արդյունքում լիովին ավարտունացած Հոգին՝ որպես պատրաստված Եռամեկ Աստծու ավարտունությունը, դառնում է Փեսան, իսկ հաղթող սրբերի հանրագումարը դառնում է հարսը Փրկագնող Աստծու և Նրա փրկագնած մարդու միջև տիեզերական սիրավեպում որպես ամբողջ Գրվածքի ավարտունություն՝ 22:17ա:

Է. Մենք պետք է քննենք ուժեղացման այս հարցը և անձնուրացորեն աղոթենք Տիրոջը՝ ասելով. «Ես ուզում եմ ներառումից անցնել դեպի ուժեղացում: Տե՛ր, Դու յոթնապատիկ կերպով ուժեղացվել ես, և ես աղոթում եմ, որ նույնպես յոթնապատիկ ուժեղանամ, որպեսզի հաղթեմ եկեղեցու դեգրադացիան Մարմինը կառուցելու համար, որն ավարտունացնելու է Նոր Երուսաղեմը»: («Մարմնացում, ներառում և ուժեղացում», ռ. էջ 29)

© 2023 Living Stream Ministry